ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2016 թվականի **թիվ 64** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 607 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման մասին» արձանագրության 17-րդ կետին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 12-րդ հավելված) եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի» 2-րդ հավելվածի 19-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի՝ «Երրորդ երկրներից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներկրվող՝ հսկողության ենթակա ապրանքների համար տրամադրվող Միասնական անասնաբուժական սերտիֆիկատների ձեւերի մասին» թիվ 607 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 7-ի
թիվ 64 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 607 որոշման մեջ կատարվող

1. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 45-րդ կետ.

«45. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք արտահանվող՝ ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքի անասնաբուժական սերտիֆիկատ (Ձեւ թիվ 45) (կցվում է)։»:

2. Նշված Որոշմամբ հաստատված Միասնական անասնաբուժական սերտիֆիկատների ձեւերը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք արտահանվող՝ ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքի անասնաբուժական սերտիֆիկատով (Ձեւ թիվ 45).

«Ձեւ թիվ 45

1. Մատակարարման նկարագրությունը	1.5. *Սերտիֆիկատ թիվ ____*
1.1. *Բեռնառաքողի անվանումը եւ հասցեն՝*	***Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք արտահանվող՝ ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքի անասնաբուժական սերտիֆիկատ***
1.2. *Բեռն ստացողի անվանումը եւ հասցեն՝*	
1.3. *Տրանսպորտը՝* *(վագոնի, ավտոմեքենայի, բեռնարկղի, ինքնաթիռի չվերթի համարը, նավի անվանումը)*	1.6. *Ապրանքի ծագման երկիրը՝*
	1.7. *Սերտիֆիկատը տրամադրած երկիրը՝*
	1.8. *Արտահանող երկրի իրավասու գերատեսչությունը՝*
	1.9. *Սերտիֆիկատը տրամադրած արտահանող երկրի հաստատությունը՝*
	1.10. *Մաքսային սահմանով ապրանքների բացթողման անցակետը՝*
1.4. *Տարանցման երկիրը (երկրները)՝*	
2. Ապրանքի նույնականացումը	
2.1. *Ապրանքի անվանումը՝*	
2.2. *Ապրանքի մշակման ամսաթիվը՝*	
2.3. *Փաթեթվածքը՝*	
2.4. *Տեղերի թիվը՝*	
2.5. *Զտաքաշը (կգ)՝*	
2.6. *Կապարակնիքի համարը՝*	
2.7. *Մականշվածքը՝*	
2.8. *Պահպանման եւ փոխադրման պայմանները՝*	
3. Ապրանքի ծագումը	
3.1. *Ձեռնարկության անվանումը, գրանցման համարը եւ հասցեն՝* *սպանդային ձեռնարկությունը (սպանդային կետը)՝* *միս վերամշակող ձեռնարկությունը՝*	
3.2. *Վարչատարածքային միավորը՝*	
4. Կերի մեջ ապրանքի պիտանիության մասին վկայականը	
Ես՝ ներքոստորագրյալ պետական/պաշտոնական անասնաբույժս, սույնով հավաստում եմ հետեւյալը՝ *Սերտիֆիկատը տրամադրվել է նախաարտահանման հետեւյալ սերտիֆիկատների հիման վրա՝* *(2-ից ավելի նախաարտահանման սերտիֆիկատների առկայության դեպքում ցուցակը կցվում է)*	

* Եվրոպական միության անդամ պետությունների համար: Ընդ որում, «նախաարտահանման սերտիֆիկատ» ասելով՝ պետք է հասկանալ ուղեկցող փաստաթուղթ (պաշտոնական սերտիֆիկատ), որը տրամադրվել է Եվրոպական միության անդամ պետության իրավասու մարմնի հավաստագրող պաշտոնատար անձի կողմից՝ Եվրոպական միության տարածքով տեղափոխելու, ինչպես նաև հաստատելու համար, որ դրա մեջ նշված՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքները բավարարում են Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական պահանջները:»:

Ամսա-թիվը	Համարը	Ծագման երկիրը	Վարչական տարածքը	Ձեռնարկության գրանցման համարը	Ապրանքի տեսակն ու քանակը (զտաքաշը)

4.1. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք արտահանվող կենդանական ծագման այն ոչ սննդային հումքը, որը նախատեսված է ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար, ստացվել է կենդանիների կամ թռչունների սպանդից եւ վերամշակումից սպանդային կամ մսի վերամշակման այն ձեռնարկություններում, որոնց նկատմամբ սահմանված չէ անասնաբուժասանիտարական որեւէ սահմանափակում, եւ որոնք գտնվում են անասնաբուժական ծառայության հսկողության ներքո:

4.2. Այն կենդանիները, որոնցից ստացվել է մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված կենդանական ծագման ոչ սննդային հումքը, ենթարկվել են նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ դրանց մսեղիքը, գլուխները եւ ներքին օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

4.3. Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը ստացվել է այն կենդանիների սպանդի կամ վերամշակման ժամանակ, որոնք ծագում են կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններից կամ վարչական տարածքներից՝բոլոր կենդանիների համար (բացի թռչուններից)՝

դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ գոտիավորմանը համապատասխան.

սիբիրախտից՝վերջին 20 օրերի ընթացքում տնտեսությունում:

Խոշոր եղջերավոր անասուններ՝

խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից, կոնտագիոզ պլեւրոպնեւմոնիայից (թոքերի արտահանման դեպքում)՝ վերջին 24 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան.

խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայից: Հումքը ծագում է խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայի առումով ապահով նախիրներից, եւ կենդանիները չեն պատկանում խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայով հիվանդ կենդանիների սերնդին. կենդանիների կերակրման համար չեն օգտագործվել որոճող կենդանիներից ստացված սպիտակուցներ՝ բացառությամբ այն բաղադրիչների, որոնց օգտագործումը թույլատրվում է ՄԱԲ-ի ցամաքային կենդանիների առողջության օրենսգրքով. մինչեւ սպանդը կենդանիներն ուշաթափ չեն արվել կենդանիների զանգատուփ խտացրած օդ կամ գազ ներմուծող մեխանիզմի օգնությամբ եւ չեն ենթարկվել գլխուղեղի ծակման. հատուկ ռիսկ ներկայացնող նյութերը կենդանիների մսեղիքից հեռացվել են ՄԱԲ-ի ցամաքային կենդանիների առողջության օրենսգրքի ցուցումներին համապատասխան:

Ոչխարներ եւ այծեր՝

ոչխարների սկրեյպից՝ ՄԱԲ-ի ցամաքային կենդանիների առողջության օրենսգրքի ցուցումներին համապատասխան.

մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան.

խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան:

Խոզեր՝

խոզերի աֆրիկյան ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան .

խոզերի բշտային հիվանդությունից՝ վերջին 24 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան, կամ վերջին 9 ամիսների ընթացքում այն երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան, որտեղ անցկացվել է սանիտարական սպանդ (սստեմպինգ առթ).

խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան.

Աուեսկի հիվանդությունից (կեղծ կատաղությունից)՝ գլուխների եւ ներքին օրգանների ներկրման դեպքում՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի ցամաքային կենդանիների առողջության օրենսգրքի ցուցումներին համապատասխան:

Թռչուն՝

թռչունների գրիպից, որը ՄԱԲ-ի ցամաքային կենդանիների առողջության օրենսգրքին համապատասխան ենթակա է պարտադիր հայտարարագրման՝ վերջին 12 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան, կամ վերջին 3 ամիսների ընթացքում սանիտարական սպանդ իրականացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում՝գոտիավորմանը համապատասխան.

Նյուքասլ հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ գոտիավորմանը համապատասխան, կամ վերջին 3 ամիսների ընթացքում սանիտարական սպանդ իրականացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում՝ գոտիավորմանը համապատասխան:

Ձիեր՝

ձիերի աֆրիկյան ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝գոտիավորմանը համապատասխան.

խլնախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ գոտիավորմանը համապատասխան .

ձիերի ինֆեկցիոն անեմիայից՝վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

էպիզոոտիկ լիմֆանգիտից՝ վերջին 2 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում հիվանդության դեպքեր չեն գրանցվել:

Ճագարներ՝

ճագարների հեմոռագիկ հիվանդությունից՝ մինչեւ սպանդը վերջին 60 օրերի ընթացքում տնտեսությունում հիվանդության դեպքեր չեն գրանցվել:

Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված կենդանական ծագման ոչ սննդային հումքը ստացվել է խոզի մսեղիքից, որի համար, տրիխինելլոզի հետազոտությունների համաձայն, գրանցվել է բացասական արդյունք, կամ որը ենթարկվել է սառեցման, ինչպես նշված է աղյուսակում՝

Ժամանակը (ժամ)	Ջերմաստիճանը (°C)
106	-18
82	-21
63	-23,5
48	-26

35	-29
22	-32
8	-35
1/2	-37

4.4. *Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը ստացվել է այն մսեղիքից, որը՝*

հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության ընթացքում չունի վարակիչ հիվանդություններին, ինչպես նաեւ տարբեր նյութերով թունավորումներին բնորոշ փոփոխություններ, հելմինթներով ախտահարվածություններ.

պահման ընթացքում չի ենթարկվել հալեցման.

չունի փչացման նշաններ.

մկանի հաստության մեջ չունի Ցելսիուսի մինուս 18 աստիճանից բարձր ջերմաստիճան՝ սառեցված ոչ սննդային մսային հումքի համար, եւ Ցելսիուսի պլյուս 4 աստիճանից բարձր՝ պաղեցրած հումքի համար:

4.5. *Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը բավարարում է անասնաբուժասանիտարական հետեւյալ պահանջները՝*

մանրէների ընդհանուր թիվը, ԳԱՄ/գ - 5 x 10^6.

սալմոնելայինը 25,0 գ-ում՝ չի թույլատրվում (միայն մորթատու կենդանիների կերակրման համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային այն հումքի համար, որը մինչեւ կենդանիների կերակրումը չի ենթարկվի ջերմամշակման).

աղիքային ցուպիկի էնտերոպաթոգեն տեսակները 1,0 գ-ում՝ չեն թույլատրվում.

կապար՝ 10,0 մգ/կգ-ից ոչ ավելի.

կադմիում՝ 0,5 մգ/կգ-ից ոչ ավելի.

մկնդեղ՝ 2,0 մգ/կգ-ից ոչ ավելի.

սնդիկ՝ 0,3 մգ/կգ-ից ոչ ավելի:

Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքի մեջ ցեզիում-137-ի եւ ստրոնցիում-90-ի պարունակությունը չպետք է գերազանցի՝ ցեզիում-137՝՝ 600 բկ/կգ. ստրոնցիում-90՝ 100 բկ/կգ:

4.6. *Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը փաթեթվածքի կամ կիսաբլոկի վրա ունի մականշվածք: Պիտակը փաթեթվածքի վրա փակցված է պիտակի կրկնակի օգտագործումը բացառող միջոցով: Այն դեպքում, երբ փաթեթվածքի կառուցվածքը չի կանխում դրա չարտոնված բացումը, ապա պիտակը փաթեթվածքի վրա տեղադրված է այնպես, որ փաթեթվածքի ցանկացած բացում հանգեցնի պիտակի ամբողջականության խախտման:*

4.7. *Փաթեթվածքը, որն անմիջականորեն շփվում է ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքի հետ, մեկանգամյա օգտագործման է եւ համապատասխանում է Եվրասիական տնտեսական միության պահանջներին:*

4.8. *Տրանսպորտային միջոցը մշակված եւ նախապատրաստված է արտահանող երկրում ընդունված կանոններին համապատասխան:*

Վայրը _____ Ամսաթիվը _____ Կնիքը

Պետական/պաշտոնական անասնաբույժի ստորագրությունը _____

Ա. Ա. Հ.-ն եւ պաշտոնը _____

Ծանոթագրություններ. 1. Ստորագրությունը եւ կնիքը պետք է գույնով տարբերվեն ձեւաթղթից:

2. Անասնաբուժական սերտիֆիկատը ձեւակերպվում է ռուսերենով, ինչպես նաեւ արտահանող երկրի լեզվով եւ (կամ) անգլերենով:

_____